

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N «ՀԿԱԾ-ԳՀԾԶԲ-2020/14»

«18» դեկտեմբերի 2020թ.

ք. Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Գ. Միրիջանյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կարիագառ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Կարապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոտրանսպորտային միջոցների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:<sup>17</sup>

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:<sup>18</sup>

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

<sup>17</sup> Հանվում է պայմանագրից, եթե մատուցվելիք ծառայությունը չի վերաբերում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի բաղադրանքներին և փոքր ծախսերի իրականացմանը:

<sup>18</sup> Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագրի կնքվելիս ԱԱՀ-ն թառերը հանվում են:

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxՕxՔ, որտեղ ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Օ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:<sup>20</sup>

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:<sup>21</sup> Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՆԱԴԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

<sup>19</sup> Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելից պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

<sup>20</sup> Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:

<sup>21</sup> Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավելի չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:<sup>22</sup>

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձևերի բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (լուսայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

<sup>22</sup>Պ է տ ա կ ա ն    բ յ ու ջ ե ի    մ ի ջ ո ճ ն եր ի    հ ա շ վ ի ն    պ ա Ր տ ա վ ո Ր ու թ յ ու ն ն եր    չ ա ո ա ջ ա ճ ն ո ղ  
գ ն ու մ ն եր ի դ ե պ ք ու մ ս ու յ յ ն ն ա խ ա դ ա ս ու թ յ ու ն ը պ ա յ մ ա ն ա գր ի ց հ ա ն վ ու մ է :


7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ**  
Հարկադիր կատարումն ապահովող  
ժառայություն  
ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա  
ՀՀ ֆինանսների նախարարության  
գործառնական վարչության  
Հ/Հ 900011288025  
ՀՎՀՀ 01223338



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**  
«Կարհագար» ՍՊԸ  
ք. Երևան, Թբիլիսյան խճ. 29/25  
Արդշիբանկ ՓԲԸ  
հ/հ՝ 2480100076100000  
ՀՎՀՀ՝ 01001431

Հ. Կարապետյան  
(ստորագրողի իսկույն)



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման հասցեն և ժամկետը
1	50111130/52	ներկայացված են ստորև	դրամ	1000000	1	ներկայացված են ստորև

\* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

h/h	SU-1 (տեխնիկական գնման/դիագնոստիկա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները)՝ ըստ չափաբաժինների	1-ին չափ.
1	2	14
<b>SU-1 ներառվող ծառայությունների անվանումները</b>		
1	Բռնկման համակարգի ստուգում	1350
2	Սառեցման համակարգի ստուգում	1350
3	Յուղման համակարգի ստուգում	1350
4	Արտածման համակարգի ստուգում	1350
5	Կցորդման համակարգի ստուգում	1350
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	1350
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	1350
8	Կրադանային փոխանցման տուփի ստուգում	1350
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	1350
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	1350
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	1350
13	ABS համակարգի ստուգում	1350
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	1350
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	1350
16	Թափքի վիճակի ստուգում	1350
17	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	1350

SU-2 ներառվող ծառայությունների անվանումները

1. Շարժիչ

		18000
1	Շարժիչի հանում և տեղադրում	27000
2	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	3600
3	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	6750
4	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	6750
5	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	36000
6	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	2250
7	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ	2250
8	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	1350
9	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	900
10	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	2250
11	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	13500
12	Շարժիչի մխցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	13500
13	Ծնկաձև լիսեռի հղկում	6750
14	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	6750
15	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	2250
16	Ծնկաձև լիսեռի աստամնանիվի փոխարինում	9000
17	Ծնկաձև լիսեռի ուղղում	4500
18	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	13500
19	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	22500
20	Շարժիչի բլոկի փոխարինում	4500
21	Շարժիչի գլանի փոխարինում (гилзобка)	9000
22	Մխոցի փոխարինում 1 հատ	13500
23	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	2250
24	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	2250
25	Բաշխիչ լիսեռի խտավուկի փոխարինում	2250
26	Փոկանիվի փոխարինում	
27	Շարժիչի աստամնավոր փոկի փոխարինում	15750
28	Շարժիչի շղթայի փոխարինում	2250
29	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	2250
30	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	4500
31	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	4500
32	Շարժիչի յուղի մղիչի փոխանակում	6750
33	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	2250
34	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	2250
35	Ցուղի ծորակի փոխարինում	

36	Օդաքաշակ փողրակի փոխարինում	2250
37	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	4500
38	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	6750
39	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	9000
40	Շարժիչի կափույրի փոխարինում	4500
41	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	4500
42	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	6750
43	Մխոցային օդակների փոխարինում 1 կ-տ	6750
44	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	4500
45	Ատամնանիվի փոխարինում	2250
46	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	
47	Սուխարիկի փոխարինում 1 կ-տ	4500
48	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	6750
49	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	2250
50	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	1350
51	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	4500
52	Շարժիչի յուղի արանքաչափի (#3S) իրանի փոխարինում	2250
53	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	4500
54	Շարժիչի գամաստեղի փոխարինում	1350
55	Գլխիկի հեղույսի փոխարինում	1350
56	Ծնկաձև լիսեռի հեղույսի փոխարինում	1350
57	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում և տեղադրում	4500
58	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	6750
<b>2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>		
59	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	900
60	Ավտոմեքենայի յուղում	900
61	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	3600
62	Յուղի պոմպի փոխարինում	11250
63	Յուղի ռադիատորի փոխարինում	6750
64	Յուղի ռադիատորի նորոգում	2250
65	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	6750
66	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	4500
67	Վառուցքի մոմի փոխարինում 1 կ-տ	2250
68	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	4500
69	Օդի գտիչի փոխարինում	900
70	Սրահի օդի գտիչի փոխարինում	900
71	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	2250

72	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում	450
73	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	1800
74	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	1800
75	Բոցամուղի կողավորում	4500
76	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	2250
77	Բենզամուղի փոխարինում	4500
78	Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում	3600
79	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4500
80	Բռնկման կարգավորում	2250
81	CO կարգավորում	2250
82	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	4500
83	Ղեկավարման բլոկի վերանորոգում	6750
84	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	4500
85	Վառելիքի բաքի մաքրում	4500
86	Օդի ծախսի տվիչի փոխարինում	4500
87	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	4500
88	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	2250
89	Բենզոբաքի բենզամուղի ցանցի փոխարինում	2250
90	Բենզոբաքի բենզամուղի ցանցի մաքրում	900
91	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	2250
92	Տվիչի փոխարինում	2250
	<b>3. Մառնեցման և արտաձման համակարգ</b>	
93	Հովհարի հանում և տեղադրում կամ փոխարինում	4500
94	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	2250
95	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	4500
96	Ռադիատորի նորոգում	9000
97	Շերտափեղկի փոխարինում	4500
98	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	2250
99	Ընդարձակող բաքի փոխարինում	1350
100	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	0
101	Ջրի ծորակի փոխարինում	2250
102	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	2250
103	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	4500
104	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ներառյալ	11250
105	Վառարանի ռադիատորի նորոգում	4500
106	Վառարանի շարժիչի փոխարինում	4500
107	Թերմոստատի փոխարինում	3600

108	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	4500
109	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	2250
110	Գեներատորի փոկի փոխարինում	2250
111	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	2250
112	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	2250
113	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	450
114	Խլարարի անուրի (xamy) փոխարինում	2250
115	Խլարարի ներդիրի փոխարինում	900
116	Խլարարի կախցի փոխարինում	1350
117	Հովացման հեղուկի փոխարինում	
	<b>4. Կցորդում և ՓՏ</b>	
118	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	11250
119	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	6750
120	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	6750
121	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4500
122	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	4500
123	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4500
124	Կցորդման երկժանիի փոխարինում	4500
125	ՓՏ-ի հիմնական նորոգում	31500
126	ԱՓՏ-ի հիմնական նորոգում	31500
127	ՓՏ-ի հավաքածույի փոխարինում	6750
128	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	2250
129	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	2250
130	ՓՏ-ի հանում և տեղադրում	6750
131	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	6750
132	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	4500
133	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	4500
134	ՓՏ-ի առամնանիլի փոխարինում	4500
135	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	4500
136	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	4500
137	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	6750
138	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	4500
139	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	3600
140	ՓՏ-ի յուղի փոխարինում	2250
141	ԱՓՏ-ի յուղի և գտիչի փոխարինում	2250
142	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	9000
143	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	13500
144	Վազբաչափի շարժարների փոխարինում	2250
	<b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>	

145	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում	
146	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	
147	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	
148	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	
149	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	
150	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում	
151	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	
152	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	
153	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	
154	Բաշխիչ տուփի երկժանի փոխարինում	
155	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	
156	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	
157	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	
158	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	
159	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	
160	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	
161	Տվիչի փոխարինում	
162	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	
163	Կարդանային լիսեռի միջին կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	
	<b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>	
164	Առջևի կամրջակի կիսաստնում հանում և տեղադրում կամ փոխարինում	3600
165	Առջևի կամրջակի կիսաստնում առանցքակալի փոխարինում	2250
166	Առջևի կամրջակի կիսաստնում առանցքակալի խտաբուկերի փոխարինում	2250
167	Կամրջակի յուղի փոխարինում	2250
168	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	6750
169	Հետևի կամրջակի կիսաստնում հանում և տեղադրում կամ փոխարինում	
170	Հետևի կամրջակի կիսաստնում առանցքակալի փոխարինում	
171	Հետևի կամրջակի կիսաստնում առանցքակալի խտաբուկերի փոխարինում	
172	Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	
173	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	
174	Հետևի կամրջակի բլրկավորման համակարգի նորոգում	
175	Կամրջակի տվիչի փոխարինում	2250
	<b>7. Կախոց</b>	

176	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	9000
177	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	3600
178	Առջևի անվակունդի առանցքակալների փոխարինում	3600
179	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	3600
180	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	3600
181	Հետևի անվակունդի առանցքակալների փոխարինում	3600
182	Անվակունդի համաստեղի և հեղույսի փոխարինում (մեկ անիվի համար)	900
183	Ձախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում	2250
184	Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	3600
185	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	1350
186	Առջևի զսպանակի փոխարինում	1350
187	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	2250
188	Հարվածամեղմիչի վրանների փոխարինում	900
189	Ներքին լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2250
190	Ներքին լծակի վրանների փոխարինում 1 հատ	1800
191	Ներքին լծակի հեղույսի փոխարինում	900
192	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	2250
193	Միջին ձգանի հանում և տեղադրում	2250
194	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	900
195	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2250
196	Վերևի լծակի վրանների փոխարինում 1 հատ	1800
197	Վերևի լծակի հեղույսի փոխարինում	900
198	Հետևի վերևի լծակի վրանի փոխարինում 1 հատ	2250
199	Գնդե հողակապերի պատյանի փոխարինում	1350
200	Գնդե հողակապերի փոխարինում	3600
201	Ծայրակալների հանում և տեղադրում	2250
202	Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	2700
203	Առջևի կայունարարի վրանների փոխարինում	1350
204	Հետևի կայունարարի փոխարինում	3150
205	Կայունարարի կալունակի փոխարինում	2250
206	Հետևի զսպանակների փոխարինում	2250
207	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	2250
208	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	2250
209	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2250

210	Զսպանի փոխարինում	4500
211	Զսպանի վրանների փոխարինում 1 հատ	2250
212	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	450
213	Հետևի հարվածամեղմիչի վրանների փոխարինում	900
214	Անկյունագծային լծակի վրանների փոխարինում 1հատ	2250
	<b>8. Ղեկային մեխանիզմ</b>	
		11250
215	Ղեկասյունակի (USuSվՍՈ) հիմնական նորոգում,	1125
216	Ղեկասյունակի (USuSվՍՈ) արորիկի փոխարինում	4500
217	Ղեկասյունակի (USuSվՍՈ) առանցքային սոնու փոխարինում	4500
218	Ղեկասյունակի (USuSվՍՈ) խաչուկների փոխարինում	2250
219	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	2250
220	Ղեկասյունակի պատյանի փոխարինում	2250
221	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	2250
222	Ղեկային մոխանիզմի ղեկասյունակի ամրացման անուրի փոխարինում	2250
223	Ղեկային ձողի առանցքակալի փոխարինում	2250
224	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	2250
225	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	2250
226	ՂԿ-ի առանցքակալի կամ վրանների փոխարինում	6750
227	Հիդրոուժեղարարի հիմնական նորոգում, աշխատանքները	2250
228	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	4500
229	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	4500
230	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	4500
231	Ղեկային ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում	2250
232	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	
	<b>9. Արգելակային համակարգ</b>	
233	Վակումային ուժեղարարի փոխարինում	4500
234	Վակումային ուժեղարարի փականի փոխարինում	2250
235	Գլխավոր զլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	4500
236	Գլխավոր զլանի հիմնական նորոգում, բոլոր աշխատանքների ընդգրկումով	4500
237	Աշխատանքային զլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	4500
238	Աշխատանքային զլանի հիմնական նորոգում	3150
239	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	

240	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150
241	Առջևի սուպպորտի վերանորոգում	2250
242	Հետևի սուպպորտի վերանորոգում	2250
243	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում	2250
244	Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում	2250
245	Արգելակային փողրակի փոխարինում	1350
246	Արգելակային կոճղակների փոխարինում	1800
247	Արգելակային համակարգի օղահանում	1800
248	Սկավառակային կոճղակների փոխարինում	1800
249	Թմբուկային կոճղակների փոխարինում	2250
250	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	2250
251	Առջևի արգելակային սկավառակի հղկում 1 հատ	2250
252	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	3600
253	Հետևի արգելակային թմբուկի հղկում 1 հատ	2250
254	Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3600
255	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	3600
256	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	2250
257	Ձեռքի արգելակային ճոպանի վերանորոգում	2250
258	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	4500
259	ABS-ի հանում և տեղադրում	4500
260	ABS-ի վերանորոգում	2250
261	Հետևի արգելակների կարգավորում	2250
262	Արգելակային հեղուկի փոխարինում	
	<b>10. Էլեկտրասարքավորում</b>	
263	Գեներատորի հանում, տեղադրում կամ փոխարինում	4500
264	Գեներատորի ստատորի փոխարինում	2250
265	Գեներատորի ռոտորի փոխարինում	2250
266	Գեներատորի լիցքավորման ռելեի փոխարինում	2250
267	Գեներատորի դիողային կամրջակի փոխարինում	2250
268	Գեներատորի առանցքակալի փոխարինում	2250
269	Գեներատորի փոկանիվի փոխարինում	4500
270	Մեկնարկիչի քանդում արատավորում, հավաքում	2250
271	Մեկնարկիչի խարիսխի փոխարինում	2250
272	Մեկնարկիչի իրանի փոխարինում	2250
273	Մեկնարկիչի բռնիչի փոխարինում	2250
274	Մեկնարկիչի բեռնեքսի փոխարինում	2250
275	Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում	2250
276	Մեկնարկիչի ռելեի փոխարինում	2250

277	Մեկնարկիչի ածուխների փոխարինում	2250
278	Ազդանշանի կարգավորում	2250
279	Ազդանշանի հանում և տեղադրում կամ փոխարինում	2250
280	Առջևի լապտերի հանում տեղադրում կամ փոխարինում	2250
281	Սարքերի պանելի հանում և տեղադրում	4500
282	Առջևի լապտերների կարգավորում	900
283	Բռնկման կողպեքի հանում տեղադրում	2250
284	Վառոցքի կոճի հանում տեղադրում	900
285	Ինդուկցիոն կոճի հանում տեղադրում	1800
286	Վազբաշափի ճոպանի հանում տեղադրում կամ փոխարինում	3600
287	Չափիչ սարքերի հանում տեղադրում	2250
288	Ապակեկլավացիի հանում տեղադրում կամ փոխարինում	1350
289	Ապակեկլավացիի շարժիչի հանում տեղադրում կամ փոխարինում	2250
290	Ապահովիչների փոխարինում	900
291	Ապակեամբարձիչների փոխարինում	2250
292	Ապակեամբարձիչների շարժիչի փոխարինում	2250
293	Էլեկտրական տվիչների փոխարինում	1350
294	Էլեկտրական անջատիչների փոխարինում	1350
295	Մարտկոցի կլեյմաների փոխարինում	900
296	Ակումյատորի դրական էլեկտրոլարի փոխարինում	900
297	Ակումյատորի բացասական էլեկտրոլարի փոխարինում	900
298	Էլ/ կոճակի փոխարինում	900
299	Էլեկտրական շտեյկերի փոխարինում	900
300	Դռների կենտրոնական փականի հանում և դեղադրում	2250
301	Ազդանշանային համակարգի տեղադրում	2250
302	Մագնիտոլային տեղադրում	2250
303	Վառողքային լարերի հանում և տեղադրում	2250
304	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	4500
305	Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում	9000
306	Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում	4500
307	Ջրի ցողիչի փոխարինում	1350
308	Բեռնախցիկի փականի փոխարինում	2250
309	Հագոցի փականի փոխարինում	2250
	<b>11. Ավտոմեքենայի սրահ</b>	
310	Արտաքին հայելիների տեղադրում կամ փոխարինում	2250
311	Դռան փականի փոխարինում	2250
312	Բեռնախցիկի ճոպանի փոխարինում	2250
313	Լամպի փոխարինում	2250

314	Ամրակներ (կլիպս) փոխարինում 1հատ	900
	<b>12. Այլ ծառայություններ</b>	
315	Եռակցման աշխատանքներ գին 1սմ (զծ.մ) համար	900
316	ՇՕ զողման աշխատանքներ գին 1 քառ. սմ-ի համար	900
317	Խառատային աշխատանքներ գին 1 կտորի համար	3600
318	Փականագործական աշխատանքներ գին 1 ժամ աշխատանքի համար	2250
319	Կոնդիցիոների լիցքավորում	5400
320	Կոնդիցիոների նորոգում	3600
321	Առջևի կամ հետևի անվաբացքի կարգավորում	4500
322	Անիվի հանում և տեղադրում	450
323	Անվադողի վերանորոգում	450
324	Անիվի բալանսավորում	225
325	Անիվի վալց	2250
326	Դիմապակու հանում և տեղադրում կամ փոխարինում	4500
327	Ապակիների թաղանթապատում գին 1քմ	3600
328	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	135
	<b>SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները</b>	
	<b>1.Շարժիչ</b>	
1	Շարժիչի գլխիկ	67500
2	Բարձիկ	11250
3	Շարժիչի գլխիկի միջադիր	6750
4	Շարժիչի միջադիրների կոմպլեկտ	18000
5	Շարժիչի փական դուրս մղող	2250
6	Շարժիչի փական ներս մղող	2250
7	Շարժիչի փականի խտաբուկ	2250
8	Փականի զսպանակ	2250
9	Ծնկաձև լիսեռ	67500
10	Ծնկաձև լիսեռի խտաբուկ առջևի	6750
11	Ծնկաձև լիսեռի խտաբուկ հետևի	6750
12	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	6750
13	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	6750
14	Մխոց	22500
15	Մխոցային օղակներ	15750
16	Մխոցային մատ	4500
17	Ատամնանիվ	6750
18	Ատամնավոր փոկ	
19	Շարժիչի կափույր	15750
20	Շարժիչի կափույրի կափարիչ	18000
21	Շարժիչի շղթա	18000
22	Շարժիչի պաշտպանիչ	11250

23	Փոկի ձգիչ	15750
24	Հիդրոձգան	9000
25	Հրիչ	13500
26	Շարժիչի հիդրոհրիչ	13500
27	Շարժիչի կալուն	9000
28	Շարժիչի հանդարտիչ	13500
29	Շարժիչի հոլովակ	4500
30	Շարժիչի հոլովակի առանցքակալ	6750
31	Շարժիչի առջևի կափարիչ	13500
32	Շարժիչի վերևի կափարիչ	18000
33	Շարժիչի վերևի կափարիչի միջադիր	13500
34	Թափանիվ	36000
35	Շարժաթև	6750
36	Ատամնանիվ բաշխիչ լիսեռի	6750
37	Ատամնանիվ ծնկաձև լիսեռի	4500
38	Փոկանիվ ծնկաձև լիսեռի	4500
39	Փոկանիվ	4500
40	Սուխարիկ փականի	2250
41	Գլխիկի բոլո	2250
42	Ծնկաձև լիսեռի բոլո	13500
43	Պարկուճ (չՌսՖՁՈ)	2700
44	Քարտեր	9000
45	Փական յուղի տարայի	2250
46	Խուփ ընդարձակման բաքի	2250
47	Խուփ շարժիչի	2250
48	Թաթիկ յուղի մղիչի	2250
49	Բարձիկ փ/տուփի	9000
50	Յուղի մղիչ	15750
51	Միջադիր յուղի մղիչի	4500
52	Յուղի ծորակ	4500
53	Շարժիչի բաշխիչ լիսեռ	45000
54	Բ/լիսեռի կափարիչ	11250
55	Բ/լիսեռի խտաբուկ	6750
56	Շարժիչի բ/լիսեռի ականոց	4500
57	Շարժիչի բ/լիսեռի երիթակ	4500
58	Ուղղորդիչ վռան	4050
59	Շարժիչի գամասեղ	3600
60	Գլխիկի միջադիր	6750
	<b>2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>	
61	Յուղ շարժիչի հանքային, 1 Լ	1125
62	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 Լ	2025
63	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 Լ	2700
64	Յուղման համակարգի լվացման հեղուկ 1 Լ	1350
65	Յուղի գտիչ	2700
66	Յուղի պոմպ	15750

67	Յուղի պոմպի շարժարեր	6750
68	Յուղի ուղիատոր	9000
69	Յուղի փողորակ	6750
70	Յուղի ծորակ	4500
71	Վառոցքի կոճ	9000
72	Արտածման կալեկտոր աջ	13500
73	Արտածման կալեկտոր ձախ	13500
74	Ներածման կալեկտոր աջ	13500
75	Ներածման կալեկտոր ձախ	13500
76	Արտածման կալեկտորի աջ միջադիր	9000
77	Արտածման կալեկտորի ձախ միջադիր	9000
78	Ներածման կալեկտորի աջ միջադիր	9000
79	Ներածման կալեկտորի ձախ միջադիր	9000
80	Վառոցքի մոմ	1800
81	Բենզոլաքի բենզոմոմի ցանց	2250
82	Բենզոմոմիչ	13500
83	Ինժեկտորի բոցամուղ բենզինով շարժիչի	22500
84	Ինժեկտորի բոցամուղ դիզելային շարժիչի	
85	Բոցամուղի խտաբուկ	4500
86	Վառելանյութի գոտիչ նուրբ մաքրման	13500
87	Վառելիքի կոշտ մաքրման գոտիչ	6750
88	Վառելանյութի խողովակ	6750
89	Աքսելերատորի ճուպան	6750
90	Օդի գոտիչ	2700
91	Օդի ծախսաչափիչ	15750
92	Օդի գոտիչի փողորակ	9000
93	Ջերմաստիճանային տվիչ	9000
94	Յուղի տվիչ	9000
95	Բաշխիչ լիսեռի տվիչ	9000
96	Օդի ծախսի տվիչ	9000
97	Արագաչափի տվիչ	9000
98	Հովհարի տվիչ	6750
99	Ջրի խողովակ երկար	6750
100	Ջրի խողովակ կարճ	4500
101	Ջրի տվիչ	4500
102	Բենզոլաքի տվիչ	4500
103	Մարման ընթացքի կարգավորիչ	4500
104	Ղեկավարման համակարգիչ	4500
105	Պարապ ընթացքի տվիչ	4500
106	Թթվածնի տվիչ	4500
	<b>3. Սառեցման և արտածման համակարգ</b>	
107	Հովհար	22500
108	Հովհարի շարժիչ	11250
109	Հովհարի թևանիվ	6750
110	Ռադիատոր	22500

111	Ընդարձակող բաքի փական	2250
112	Ընդարձակող բաքի փողրակ	4500
113	Ընդարձակող բաք	9000
114	Ռադիաստորի փողրակ ներքևի	4500
115	Ռադիաստորի փողրակ վերևի	4500
116	Թերմոստատ	6750
117	Ջրի մղիչ	13500
118	Ջրի մղիչի միջադիր	900
119	Ջրի պոմպի խտաբուկ	2250
120	Ջրի պոմպի առանցքակալ	2250
121	Սառեցման հեղուկ 1 լիտր	1575
122	Չսառչող հեղուկ ապակիների համար	1350
123	Ջգիչ հոլովակի	6750
124	Փոկ մեծ	4500
125	Հովացման համակարգի ռետինե խողովակ	4500
126	Ծորակ	4500
127	Փոկանիվ գեներատորի փոկի	4500
128	Խլարարի ներդիր	4500
129	Խլարարի կախոց	2250
130	Կրոնշտեյն	2250
131	Խլարարի անուր (Խամուտ)	675
132	Շարժիչ վառարանի	13500
133	Վառարանի ռադիատոր	13500
	<b>4. Կցորդում և ՓՏ</b>	
134	Կցորդման աշխատանքային զլան	9900
135	Կցորդման գլխավոր զլան	11250
136	Կցորդման գլխավոր զլանի կալունակ	6750
137	Կցորդման սեղմող սկավառակ	22500
138	Կցորդման տարվող սկավառակ	13500
139	Կցորդման առանցքակալ	9000
140	Կցորդման ոտնակ	6750
141	Կցորդման ճոպան	6750
142	ՓՏ-ի յուղ I լ	3600
143	ԱՓՏ-ի յուղ I լ	4500
144	ՓՏ-ի առջևի խտաբուկ	4500
145	ՓՏ-ի հետևի խտաբուկ	5400
146	ՓՏ-ի առանցքակալ	9000
147	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմ	8100
148	ՓՏ-ի առաջնային լիսեռ	6750
149	ՓՏ-ի երկրորդային լիսեռ	9900
150	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	10350
151	ՓՏ-ի երկժանի	5400
152	ՓՏ-ի ատամնանիվ	6750
153	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	45000
154	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	

155	ԱՓՏ-ի գտիչ	4500
156	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	27000
157	Հերմետիկ	2250
	<b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>	
158	Բաշխիչ տուփի խցուկ	
159	Բաշխիչ տուփի առանցքակալ	
160	Բաշխիչ տուփի ատամնանիվ	
161	Բաշխիչ տուփի լիսեռ	
162	Կարդանային լիսեռ	
163	Էլաստիկ մուֆտ	
164	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	
165	Կարդանային լիսեռի խաչուկ	
	<b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>	
166	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	13500
167	Դիֆֆերենցիալի սատելլիտ	13500
168	Տանող ատամնանիվի խցուկ	4950
169	Տանող ատամնանիվի առանցքակալ	6750
170	Դիֆֆերենցիալի առանցքակալ	6750
171	Ձախ կամ աջ կիսաստնու փոշեթիկնոց	4500
172	Կիսաստնի	20250
173	Կիսաստնու առանցքակալ	6750
174	Կիսաստնու միջադիր	2700
175	Կիսաստնու խցուկ	4500
176	Կարգավորիչ տափողակ	3600
	<b>7. Կախոց</b>	
177	Կրոնշտեյն	2250
178	Աջ կամ ձախ հողակապ	13500
179	Աջ կամ ձախ հողակապի փոշեթիկնոց	4500
180	Աջ կամ ձախ հողակապի խցուկ	4500
181	Անվակունդ	18000
182	Անվակունդի խցուկ	11250
183	Անվակունդի ներքին առանցքակալ	11250
184	Անվակունդի արտաքին առանցքակալ	11250
185	Հետևի անվակունդի առանցքակալ	11250
186	Հարվածամեղմիչի թասակ	6750
187	Զսպանակ	6750
188	Առջևի հարվածամեղմիչ	11250
189	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	4500
190	Հարվածամեղմիչի վրան	4500
191	Ներքևի լծակ	13500
192	Ներքևի լծակի վրան	6750
193	Վերևի լծակ	13500
194	Շկվոռնի	
195	Ռեզրավոյ	
196	Վերևի լծակի վրան	4500

197	Գնդէ հողակապ	6750
198	Առջևի կայունարար	9000
199	Առջևի կայունարարի վրան	4500
200	Առջևի կայունարարի կանգնակ	2250
201	Հետևի զսպանակ	4500
202	Ճոճանակային լծակի վրան	4500
203	Հետևի ցնցամեղմիչ	11250
204	Հետևի մետաղաձող (շտանգա)	9000
205	Հետևի մետաղաձողի (շտանգա) վրան	4500
206	Հետևի անկյունագծային լծակ	9000
207	Անկյունագծային լծակի վրան	4500
208	Զսպակի վրան	
209	Զսպակի միջադիր	
210	Զսպակի բռնիչ	
211	Ծայրակալ	2250
212	Զգան մեջտեղի	4500
213	Աջ կամ ձախ ձգան	4500
	<b>8. Ղեկային մեխանիզմ</b>	
214	Ղեկային կալուն	31500
215	Ղեկային կալունի առանցքակալ	6750
216	Ղեկային կալունի վերանորոգման կոմպլեկտ	9000
217	Ղեկային կալունի խաչուկ	4500
218	Հիդրոուժեղարարի փոկ	3600
219	Հիդրոուժեղարարի պոմպ	22500
220	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	11250
221	Զգան մեջտեղի	8100
222	Ղեկային ձող	12600
223	Ղեկային ձողի ծայրակալ	7425
224	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լ.	2250
225	Ճոճանակի վրան	10575
	<b>9. Արգելակային համակարգ</b>	
226	Գլխ. գլան	22500
227	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	13500
228	Վակուումային ուժեղարար	27000
229	Բանվ. գլան	13500
230	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	9000
231	Արգելակային փողոակ	4500
232	Սուպպորտ	13500
233	Սուպպորտի ուղղորդիչ	9000
234	Սուպպորտի մոնժետ	2250
235	Արգելակային հեղուկ	2250
236	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	9000
237	Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	9000
238	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	9000
239	Առջևի արգելակային սկավառակ	13500

240	Հետևի արգելակային սկավառակ	13500
241	ABS-ի տվիչ	6750
242	Ձեռքի արգելակի ճոպան	6750
243	Ձեռքի արգելակի լծակ	4500
	<b>10. Էլեկտրասարքավորում</b>	
244	Գեներատոր	13500
245	Գեներատորի դիողային կամրջակ	9000
246	Գեներատորի ռեկե	6750
247	Գեներատորի առանցքակալ	6750
248	Ստարտեր	13500
249	Ստարտերի ռեկե	6750
250	Ստարտերի ածուխ	4500
251	Բենդեքս	6750
252	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	6750
253	Խցիկի լապտերի լամպ	450
254	Արգելակային լապտերի լամպ	450
255	Առջևի թարթիչ լապտերի լամպ	450
256	Հետևի թարթիչի լապտերի լամպ	450
257	Հետևի լապտերի լամպ	450
258	Հակամշուշային լապտերի լամպ	2250
259	Առջևի լապտերի լամպ	2700
260	Էլեկտրական անջատիչ	4500
261	Էլեկտրական տվիչ	4500
262	Ապակեմաքրիչ	1350
263	Բռնկման կողպեք	4500
264	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	13500
265	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	9000
266	Վառոցքային լարերի խուրց	4500
267	Վառոցքի մոմի ծայրակալ	900
268	Վազքաչափ	9000
269	Վազքաչափի ճոպան	4500
270	Դռան կողպեք	6750
271	Ազդանշան	4500
272	Ապակեվազիչի բաշոկ	4500
273	Ապակեվազիչի շարժիչ	6750
274	Դռների կենտրոնական փական	9900
275	Հայելի կողային	13500
276	Դիմապակի	22500
277	Դռան ապակու ամբարձիչ	6750
278	Դռան ապակու Էլեկտրամարձիչի շարժիչ	6750
279	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր 1 կտորի վերանորգման համար	4500
280	1 կտորի վերանորգման	9000
281	Էլեկտրական մարտկոց /ակումուլյատոր/ ըստ մեքենայի գործարանային ստանդարտի	13500
282	Ավտոմեքենաների ձմեռային անվաղողեր	9000

- \* Գնման հայտով ներկայացված առարկան բաղկացած է 1 չափաբաժնից:
- \*\* Այն մասերը, որոնք ենթակա չեն վերանորոգման, պետք է փոխարինել նորով, որոնց համար պետք է տրվի առնվազն 6 ամիս երաշխիքային ժամկետ:
- \*\*\* Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը:
- \*\*\*\* Գնման գործընթացի ֆինանսական միջոցները կազմակերպվում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն 2020 թվականի բյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին (CPV՝ 50111130), 4252 հոդդաձով:
- \*\*\*\*\* Հաղթող ճանաչվելու է ըստ չափաբաժինների նվազագույն հանրագումարային գին ներկայացրած մասնակիցը:
- \*\*\*\*\* Գնումների մասնակցության իրավունքը և որակավորման չափանիշները՝ համաձայն գործող օրենսդրության:
- \*\*\*\*\* ՀՀ կառավարության N 526-Ն որոշման 23-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն գնման ընթացակարգը տեսակարար կշռով որակվել է որպես ծառայություն:

Այլ պայմաններ

1. Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:
2. Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում առանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում և հինգ աշխատանքային օրվա ընթացքում պահեստամասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում, երբ փոխարինվող պահեստամասերը տվյալ պահին առկա չեն Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:
3. Կատարողը պարտավոր է ունենալ Տեխ. սպասարկման կայան Երևան քաղաքում:
4. Տեխ. սպասարկման կայանը նույն վայրում պետք է ունենա առնվազն 4 ամբարձիչ՝ մինիմում երեք տոննա բարձրացնելու կարողությամբ, դիտափոս, անվաբացքի կարգավորման ստենդ, ինժեկտորի լվացման և կարգավորման ստենդ, արգելակների ստուգման ստենդ, էլեկտրական բնույթի խափանումները վերացնելու հնարավորություն, ավտոփականագործ, շարժիչագործ, ավտոէլեկտրիկ, ինժեկտորային մասնագետ, ախտորոշման/դիագնոստիկ սարք նշված ավտոմեքենաների ծրագրով, կատարի շարժիչի և նրա համակարգերի, ուժային և ղեկավարման համակարգերի ընթացային մասի և թափքի ինչպես ընթացիկ այնպես էլ կապիտալ վերանորոգման աշխատանքներ:
5. Պետք է ապահովված լինի փակ և պահպանվող տարածքով՝ պահակային ծառայության կողմից 24 ժամ հսկողություն իրականացվող առնվազն 20 ավտոմեքենայի համար:
6. Պետք է ունենա ավտոքարշակ՝ 3.5 տոննա նվազագույն բեռնատարողությամբ, որը վթարված ավտոմեքենան անկախ դրա գտնվելու վայրից պետք է տեղափոխի տեխ. սպասարկման կայան:

7. Ավտոմեքենայի անհրաժեշտ նորոգման և տեխնիկական սպասարկման համար Կատարողը պարտավոր է Պատվիրատուի նշված ժամկետում և պահանջով ընդունել ավտոմեքենան SU կայան և անմիջապես իրականացնել ախտորոշման, անհրաժեշտ քանդման, ապամոնտաժման, զննման և զնահատման աշխատանքներ:

8. Յուրաքանչյուր ավտոմեքենայի սպասարկման և նորոգման համար՝ Պատվիրատուի պահանջով Կատարողի կողմից կազմվում, կնքվում և պատվիրատուին է ներկայացվում նախնական զննման և զնահատման ակտ:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հարկադիր կատարումն ապահովող  
ծառայություն

ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա  
ՀՀ ֆինանսների նախարարության  
գործառնական վարչության  
Հ/Հ-900011288025  
ՀՎՀՀ 01223338



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Կարհագար» ՍՊԸ  
ք. Երևան, Թբիլիսյան խճ.  
29/25

Արդշինբանկ ՓԲԸ  
h/h՝ 2480100076100000  
ՀՎՀՀ՝ 01001431

Հ. Կարապետյան  
(ստորագրություն)





Պայմանագրի կողմ

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_

հհ \_\_\_\_\_

հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_

հհ \_\_\_\_\_

հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**  
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**  
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « \_\_\_\_ » « \_\_\_\_\_ » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N \_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	վիաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	վիաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի  
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի կերման ամսաթիվը պայմանագրի համարը

զնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն

\_\_\_\_\_  
ստորագրություն

\_\_\_\_\_  
ստորագրություն